

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 22.10.2020թ. թիվ 2011786922 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու

մասին
<<13>> 11 2020թ. 7-13 14376

ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Մարինե Մովսիսյանի ՄԴ/146483-20 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Ֆուչիկի 2-րդ նրբանցքի 2 շենքի 28 բնակարանի բնակիչ Մարինե Մովսիսյանը դիմումով խնդրել է վերանայել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 22.10.2020թ. թիվ 2011786922 որոշումը՝ նշելով, որ իրավախախտման տեսանյութը չի բեռնվում:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ թիվ 2011786922 որոշումն ենթակա է կատարման հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները:

<<Կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 7-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ կարմիր ազդանշանը, այդ թվում նաև՝ թարթող, արգելում է երթևեկությունը, իսկ նույն որոշման 18-րդ կետի՝ լուսացույցի (բացի դարձափոխայինից) կամ կարգավորողի արգելող ազդանշանի դեպքում վարորդը պետք է կանգ առնի <<Կանգ-գիծ>> գծանշման (կամ 6.16՝ <<Կանգ-գիծ>> նշանի) առջև, իսկ դրա բացակայության դեպքում՝ հատվող երթևեկելի մասի առջև՝ հաշվի առնելով կանոնների 93-րդ կետը, խոչընդոտ չստեղծելով հետիոտների համար և այլ վայրերում՝ լուսացույցի կամ կարգավորողի առջև՝ խոչընդոտ չստեղծելով թույլատրելի ուղղություններով երթևեկող տրանսպորտային միջոցների և հետիոտների համար:

Իրավախախտումն ամրագրած տեսանյութի ուսումնասիրությամբ ակնհայտ է դառնում այն փաստը, որ դիմումատուի կողմից 07.10.2020թ. ժամը 14:38-ին Երևան քաղաքի Տերյան-Կորյուն փողոցների խաչմերուկի հատվածում <<Կանգ-գիծ>> գծանշումը հատելու պահին միացված է եղել լուսացույցի կարմիր ազդանշանը: Այսպես՝

- տեսանյութի 14:38:11-րդ վայրկյանին միանում է լուսացույցի դեղին ազդանշանը, երբ դիմումատուի տրանսպորտային միջոցը գտնվում էր <<Կանգ-գիծ>> գծանշման առջև,
- տեսանյութի 14:38:13-րդ վայրկյանին միանում է լուսացույցի կարմիր արգելող ազդանշանը, երբ դիմումատուի տրանսպորտային միջոցը գտնվում էր <<Կանգ-գիծ>> գծանշման առջև,
- դիմումատուի տրանսպորտային միջոցը <<Կանգ-գիծ>> գծանշումը հատում է միայն տեսանյութի 14:38:14-րդ վայրկյանին, երբ դեռ շարունակում էր միացված մնալ լուսացույցի կարմիր արգելող ազդանշանը:

Վերը նշված փաստերի վերլուծության արդյունքում տրանսպորտային միջոցի վարորդի կողմից իրավախախտման կատարած լինելու փաստը կասկած չի հարուցում:

Այսպիսով, հիմնավորվել է, որ տրանսպորտային միջոցի վարորդին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին վերը նշված որոշումն իրավաչափ է և օրինական:

Ինչ վերաբերվում է ոստիկանության կայքում տեղադրված PIN անհատական ծածկագրի տակ զետոլված տեսանյութի չբեռնվելու մասին դիմումատուի պնդմանը, ապա այն բեռնվում է և հասանելի է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 22.10.2020թ. թիվ 2011786922 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Մարինե Մովսիսյանին:

Կատարող Ա.Ղափլանյան
Շեռ.՝ 011 544-783



Ե.Կարապետյան